


# ԱՐՁԱԳԱՆԳ

Posted on September 6, 2013 by Keghart




Category: [Opinions](#)



## Յարութիւն Իսկահատեանի

### «Վկայարան»ները

Պարոյր Աղպաշեան, Պէյրութ, 26 Սեպտեմբեր 2013


 Ճարտարագետ Յարութիւն Իսկահատեան հետաքրքրքրկան, այլապէս ալ՝ Նոյնքան կարելոր հաւաքագրական աշխատանքի մը լծուած է, լոյսին բերելով, յաջորդաբար, «Վկայարան Հայկական Ցեղասպանութեան» հատորները (հինգ հատոր):

Խորագիրը ինքնին կը յուշէ այս հրատարակութիւններու բովանդակութիւնը, անոնց տալով ինքնատիպութիւն մը եւ իւրայատկութիւն մը, միայնգամա՛յն, պարզապէս անոր համար, որ տքնաջան, պրպտողական ու հետեւողական աշխատասիրութեան մը պտուղն են անոնք:

## Յարութիւն Իսկահատեանի

### «Վկայարան»ները

Պարոյր Աղպաշեան, Պէյրութ, 26 Սեպտեմբեր 2013

 Ճարտարագետ Յարութիւն Իսկահատեան հետաքրքրքրկան, այլապէս ալ՝ Նոյնքան կարելոր հաւաքագրական աշխատանքի մը լծուած է, լոյսին բերելով, յաջորդաբար, «Վկայարան Հայկական Ցեղասպանութեան» հատորները (հինգ հատոր):

Խորագիրը ինքնին կը յուշէ այս հրատարակութիւններու բովանդակութիւնը, անոնց տալով ինքնատիպութիւն մը եւ իւրայատկութիւն մը, միայնգամա՛յն, պարզապէս անոր համար, որ տքնաջան, պրպտողական ու հետեւողական աշխատասիրութեան մը պտուղն են անոնք:

Իսկահատեան գիտութեան ու ուսողագիտութեան մասնագիտութիւն մը ընտրած է, բայց ուսանողական տարիներուն իսկ, ան յատուկ սեր ու կապուածութիւն ցուցաբերած է հայոց լեզուի, գրականութեան ու մշակոյթին նկատմամբ, հետագային հետեւելով Հ. Բ. Ը. Միութեան Երուանդ Հիւսիսեան Հայագիտական Հիմնարկի դասընթացքներուն:

Տարիներու թաւալքը ու կեանքի պայմանները, սակայն, երբեք պատճառ չդարձան, որ Յարութիւն Իսկահատեանը մոռնայ կամ հեռանայ իր ինքնութենէն եւ արմատներէն, ընդհակառակը, ան աւելի կառչած մնաց անոնց, աւելի փարած՝ անոնց նուիրականութեան:

Լուսարձակներէ հեռու, Իսկահատեան շարունակեց իր հետազոտութիւնները, յարատեւօրէն, իր «լուման» բերելով Հայկական Ցեղասպանութեան հաստափոր թղթածրարին, առանց յաւակնութիւնը ունենալու, թէ ամբողջական են անոնք, որովհետեւ համոզուած էր այս նիւթին անսպառութեան եւ լայնածիրութեան:

Առաջին հայեացքով ոմանց մօտ կրնայ ստեղծուիլ այն տպաւորութիւնը, թէ՛ «Վկայարան»ները այդքան ալ ջանք ու ներդրում պահանջող գործեր չեն, ինչ որ հիմնովին սխալ մտածում մըն է, այնքան ատեն որ հեղինակը իսկայական աշխատանք տարած է (գրադարան, մամուլ, անհատ, եւայլն) յայտնաբերելու ու հաւաքագրելու Ցեղասպանութեան նուիրուած հրատարակութիւնները:

Ճիշդ է, այս հատորները ուսումնասիրական, վերլուծական կամ մեկնաբանական չեն, այլ՝ չոր արձանագրութիւններ,

սակայն, առանց կորսնցմելու իրենց այժմեականությունն ու շահեկանությունը, ներկայ եւ ապագայ պատմագիրներուն ու ցեղասպանագետներուն տրամադրութեան տակ դնելով զանոնք, առ ի համապատասխան օգտագործում եւ արժեւորում:

Գիրքերուն ընթերցումը իւրաքնչիւրին հեղինակային հատորով ու մատենաշարային կարգով, Հայկական Ցեղասպանութեան վաւերականութեան ու վաւերագրութեան արտացոլումն է, սեղմ ու տեղին պարունակութեամբ:

Յարութիւն Իսկահատեան բանասէր չէ, ոչ ալ պատմաբան, սակայն, իր այս հրատարակութիւնները կը միտին պատկան մասնագետներուն օգտակար դառնալ, առաւել` ան փորձած է անոնց տալ գիտականութեան ու ճշգրտութեան գնահատելի շղարշ մը, այս պարագային` անձնանուններու, տեղանուններու, տպարաններու, պարբերականներու եւ յարակից ցանկերով:

Հայկական Ցեղասպանութեան գրականութեան մէջ, «Վկայարան»ները եւս ունին որոշակի արժէքը, թէ՛ գրահրատարակչական, թէ՛ յուշագրական, թէ՛ նկարագրական, թէ՛ մատենաշարական առումներով, որուն համար շնորհակալ դեր կատարած է Իսկահատեանը:

Վստահաբար, Յարութիւն Իսկահատեան «վճռած» է շարունակել «Վկայարան»ներու երթուղին, նոր իրագործումներով ու հրատարակութիւններով, որուն համար իրեն կը մաղթենք ամենայն յաջողութիւն:

